ՍԷՑԴԱԲԱԴԻ ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՆՇԱՆԱՒՈՐ ՄԻ ՔԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ

ՏԻԳՐԱՆ ՍՐԿ. ԲԱՂՈՒՄԵԱՆ
tigransrk@yahoo.com

Հնդկահայ գաղութի կեանքում իր ուրոյն դերն ու նշանակութիւնն է ունեցել Բենգալիա նահանգը[1], ուր հայերը բնակուել են անգլիացիներից շատ առաջ՝ ԺԷ. դարասկզբին։ Դրա ակնյայտ վկայութիւնը Կալկաթայի Ս. Նազարէթ հայկական եկեղեցու բակում գտնուող նահանգի ամենահին քրիստոնէական գերեզմանն է, որը 1884 Օգոստոսին յայտնաբերել է հնդկահայ գաղութի քաջ գիտակ, հմուտ բանասէր Մեսրոպ Սէթը։ Փաստօրէն, 1630ին իր մահկանացուն կնքած Ռգաբիրէ հայուհու գերեզմանը ոչ միայն պատմական եւ մշակութային արժէք է հայերի համար, այլեւ իր նշանակութեամբ եւ արժէքով պատմականութիւն է ձեռք բերել հենց Հնդկաստանի համար[2]։

Բենգալիան յատկապէս ծաղկում ապրեց Մուղալ[3] կայսրութեան կառավարիչների օրօք, երբ նպաստաւոր պայմաններ ստեղծուեցին միջազգային առեւտրի համար, որից էլ մեծապէս օգտուեցին եւրոպացի եւ հայ վաճառականները։ Բենգալիայում առեւտրական լայն գործունէութիւն էին ծաւալում ժամանակի նշանաւոր հայ վաճառականներ Խոջա Փանոս Քալանթարը, նրա եղբօրորդի Խոջա Իսրայէլ Սարհագը, Խոջա Վազէդը, Խոջա Պետրոսը եւ ուրիշներ, ովքեր իրենց հեղինակութեամբ եւ գործունէութեամբ վայելում էին Մուղալ կայսրերի բարեացակամ վերաբերմունքը։ Նրանց շնորհիւ ծաղկում էր ապրում ջուլի, մետաքսի, պարարտանիւթի եւ այլ ապրանքների առեւտուրն ամբողջ Հնդկաստանում։ Մուղալ կայսրութեան կառավարիչների, 1688ին Խոջա Փանոս Քալանթարի եւ Անգլիական Արեւելահնդկական Ընկերութեան միջեւ կնքուած պայմանագրի շնորհիւ հայերն ունէին բոլոր ազատութիւնները եւ իրաւունքները[4]։ Շատ անգամ հենց հայերն էին դառնում միջնորդ կայսրութեան եւ օտար առեւտրականների միջեւ՝ լուծելով զանազան եւ երբեմն էլ անհնարին թուացող խնդիրներ[5]։ Խելացի եւ հմուտ վերոնշեալ վաճառականների, նահանգում ունեցած նրանց դիրքի եւ ամենակարեւորը՝ տեղի կառավարիչների լաւ վերաբերմունքի շնորհիւ նպաստաւոր պայմաններ էին ստեղծուած հայերի բնակութեան եւ բազմանալու համար։

Ի դէմս հայերի՝ նահանգի կառավարիչները տեսնում էին աշխատասէր, դիմացինին յարգող, գործունեայ եւ հիւրասէր մարդկանց, ովքեր ոչ միայն մտածում էին իրենց անձնական շահոյթի մասին, այլ նաեւ իւրովսանն օգտակար լինում հենց Հնդկաստանին։

Հայերը բնակւում էին Բենգալիայի Սէյդաբադ, Կալկաթա, Զինսուրա, Դաքքա, Պատնա, Կասիմբազար եւ այլ քաղաքներում։

Այսօր հայաբնակ է միայն Կալկաթան, ուր ապրում են շուրջ 150 հայեր։ Զանազան պատճառներով նրանց մեծ մասը չեն խօսում հայերէն եւ կտրուած են իրենց ազգային արմատներից։ Վերջին տարիներին, սակայն, որոշակի աշխուժութիւն է նկատւում, երբ Հայոց Մարդասիրական Ճեմարանը յանձնուեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինութեանը[6], եւ Կալկաթայի եկեղեցական

վարչութեան ջանքերով նորոգուեցին հայկական եկեղեցիները, բարեկարգուեցին յարակից տարածքները, ուշադրութիւն դարձուեց նաեւ հայերի սոցիալ-տնտեսական պայմաններին[7]։

Սկզբում հայերը Բենգալիայում պաշտօնապէս հաստատուել են Մուրշիդաբադի[8] մատոյցներում գտնուող Սէյդաբադ քաղաքում, որն այն ժամանակ Բենգալիայի մայրաքաղաքն էր։ Մասնաւորապէս ժամանակի Աւուրանգզէբ (1658-1707) կայսրն[9] իր ֆարմանով 1665ին Սէյդաբադում հող է նուիրում հայերին՝ թոյլատրելով բնակութիւն հաստատել այնտեղ[10]։ Հայերին տրուած արտօնութեան մասին է վկայում նաեւ ԺԸ. դարում Հնդկաստանի Արեւելեան Ընկերութեան աշխատակից Բոլցը՝ մասնաւորապէս ընդգծելով. «Հայերը, ովքեր մեծ առեւտրական գործօն են Հնդկաստանում, վաղ ժամանակներից մնայուն գաղութներ են ունեցել նաեւ Բենգալիայում, մասնաւորապէս Սէյդաբադում: Նրանց վաճառականութիւնն էլ հաստատուած էր մուղալական ֆարմանով, որով իրենց երկու գլխաւոր ապրանքների՝ մանուֆակտուրայի եւ հում մետաքսի վրայ 3.5 տոկոս հաստատագրուած հարկ էր դրուած»[11]։

Աւուրանգզէբի կողմից հայերին հող նուիրաբերելն իրօք ուշագրաւ փաստ է։ Հայերի նկատմամբ նման շռայլութիւնն ու վերաբերմունքը պայմանաւորուած էր հաւանաբար մի շարք հանգամանքներով՝ Հնդկաստանի պատմութեան մէջ ունենալով նաեւ իր նախադէպը։

Նախ՝ մինչ այդ հայերն արդէն իսկ իրենց հաստատուն դիրքն ունէին շրջապատում եւ վայելում էին տեղացիների վստահութիւնն ու յարգանքը։ Տեղին է յիշատակել հայերի նկատմամբ Աւուրանգզէբի նախորդներից՝ Աքբարի (1556-1605) վարած իմաստուն եւ հեռատես քաղաքականութեան մասին։ Վերջինս, ցանկանալով երկրում զարգացնել արհեստագործութիւնը եւ խթանել առեւտուրը, իր թագաւորութեան սահմաններում ազատ ելումուտքի իրաւունք է տալիս հայ վաճառականներին։ Հայ առեւտրականներն առանց մաքսի կարող էին ցանկացած ապրանք ներմուծել եւ արտահանել, մտնել եւ առեւտրով զբաղուել երկրի այնպիսի շրջաններում, ուր օտարների մուտքն արգելուած էր։ Աքբարը Ագրայում նաեւ հողատարածք է յատկացրել հայերին եւ նպաստաւոր պայմաններ ստեղծել նրանց գործունէութեան համար։

Ոչ-պակաս էական է նաեւ այն փաստը, որ Աքբարի օրօք Հնդկահայերը նաեւ պետական կարեւոր պաշտօններ են զբաղեցրել։ Օրինակ՝ ազգութեամբ հայ էին երկրի գլխաւոր դատաւոր Միր Ադրը կամ Աբդուլ Հայը, պալատական բժշկուհի Ցուլիանան, պորտուգալերէնի թարգմանիչ Դոմինգօ Պիրէսը։ Ազգութեամբ հայ էին նաեւ այլ պետական պաշտօնեաներ։ Եւ վերջապէս հայուհի էր հենց թագաւորի կանանցից մեկը՝ Մարիամ Զամանի Բեգումը։ Հետաքրքրական փաստ է նաեւ, որ Աքբարը, սկզբում զաւակ չունենալով, որդեգրել էր Ջուղայեցի Յակոբջանի որդուն՝ Ղուլղունէլին[12]։ Ինքնին այս փաստերը խօսուն վկայութիւն են տուեալ ժամանակաշրջանում հայերի նպաստաւոր դիրքի եւ երկրում ունեցած նրանց նշանակալի դերակատարութեան մասին, նաեւ՝ լաւագոյն նախադէպեր Աւուրանգզէբի համար։ Ուստի չպէտք է զարմանալ հայերի նկատմամբ նրա վարած քաղաքականութեան վրայ[13]։ Կարելի է ենթադրել նաեւ, որ Աւուրանգզէբը շատ լաւ ծանօթ էր հայերի աշխատասիրութեանը, տեղանքը շէնացնելու եւ բարեզարդելու նրանց շնորհքին եւն., ուստի

առանց երկմտելու էլ հայերին է նուիրաբերում այդ հողակտորը՝ վստահ լինելով, որ նրանք անպայման ծաղկեցնելու են այդ տարածքը։

Ցետագայ պատմութիւնը լաւագոյնս ապացուցում է, որ առաջին հնդկահայերը ոչ միայն հայկական եկեղեցի են կառուցում այնտեղ, այլ նաեւ բարեկարգում եւ շէնացնում են տարածքը։ Անգամ այսօր Սէյդաբադում, ուր այլեւս հայեր չկան, երբ այցելում ես հայկական եկեղեցի, ակամայից բախւում ես նոյն իրողութեան հետ։ Կալկաթայից մեքենայով 5-6 ժամ հեռաւորութեան վրայ գտնուող այդ քաղաքը գնալիս ճանապարհին ամէնուր հանդիպում ես խարխուլ տների, չքաւոր մարդկանց։ Բայց երբ մօտենում ես եւ տեսնում հայոց եկեղեցու տարածքը, իրապէս զարմանք ես ապրում, քանզի կայսեր կողմից ԺԷ. դարում նուիրաբերուած այդ տարածքը կրկին խնամուած վիճակում է, պարսպապատ, բարեկարգուած, իսկ եկեղեցուն պատկանող լիճը՝ մաքուր։

***

Հայերը Սէյդաբադում հիմնականում զբաղւում էին կտորի եւ հում մետաքսի առեւտրով։ ԺԸ. դարի կէսերին արդէն բազում հայեր էին այնտեղ ապրում, որի ակնյայտ վկայութիւնը Սուրբ Աստուածածին հայկական եկեղեցու կառուցումն է 1758ին՝ Կալկաթայի ժամանակի հայ համայնքի ղեկավար, ջուղայեցի նշանաւոր վաճառական, բարեգործ Խոջա Պետրոսի († 1778)[14] անձնական միջոցներով՝ ի յիշատակ իր հանգուցեալ ծնողներ Ցարութիւնի եւ Ովսաննայի եւ իր հարազատների։ Ցաւօք, վերջին տարիներին Կալկաթայի եկեղեցական վարչութեան ջանքերով Սէյդաբադի եկեղեցում կատարուած շինարարական-վերականգնողական աշխատանքների պատճառով եկեղեցուց անհետացել է հիմնադրման մասին արձանագրութիւնը։

Բարեբախտաբար այն պահպանուել է Հնդկաստանի եւ Մայրագոյն Արեւելքի Հայրապետական պատուիրակ Տ. Հայկազուն Արք. Աբրահամեանի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ձեռագրատանը պահուող անտիպ օրագրում։ Սրբազան Հայրը, 1965 Յունուարի 31ին այցելելով Սէյդաբադ, շարադրում է օրուայ մասին իր տպաւորութիւնները։ Իր արժէքաւոր օրագրութեան մէջ նա մէջբերում է նաեւ եկեղեցու կառուցման արձանագրութիւնը. «Շինեցաւ պայծառափայլ Սուրբ Աստուածածնի եկեղեցիս հանդերձ երկոքին գաւթօքն իւրովք եւ չորեքկողմեան պարսպօքն եւ սենեկօք յամի Տեառն 1758 Արամ 15 (Դեկտեմբերի 30ին - Տ.Բ.), արդեամբք եւ ծախիւք Խոջաբաբեան (հաւանաբար պիտի լինի՝ Խոջա Աբրահամեան - Տ.Բ.) ամենաբարեպաշտ եւ Քրիստոսիս զօրացեալ ՊԵՏՐՈՍ աղային, որ եւ է տունս տէրունական, յիշատակ բարեաց իւրն յիշել Պետրոս աղային եւ լուսահոգի ծնօղացն՝ հօրն Յարութիւնին եւ մօրն Ովսաննային եւ կողակցին Դաստագուլին եւ եղբարցն Գրիգոր աղային եւ պարոն Բարսեղին եւ այլ ամենայն արեանս առու մերձաւորացն նորին, կենդանեացն եւ առ ի Քրիստոս հանգուցելոցն։ Գրեցաւ ի փոքր թուին Ազարիայի 145 (1760), համիրայ ամսոյ 15 (Նոյեմբերի 30ին - Տ.Բ.)։ Է սա տաճար տէրունական, հրեշտակաց բնակարան եւ մարդկան քաւարան։ Վերջ»[15]։

Խոջա Պետրոսի ջանքերի շնորհիւ 1763ին բարեկարգուել է նաեւ 1707ին հիմնադրուած Կալկաթայի Ս. Նազարէթ հայկական եկեղեցին. աւելացուել են մայր խորանի աջ եւ ձախ կողմերում գտնուող խորանները։ Ս. Գրիգոր Լուսա-

ւորչին նուիրուած խորանը նա կառուցել է ի յիշատակ իր եղբայր Գրիգոր Ցարութիւնեանի[16], իսկ միւսը նուիրաբերել Քրիստոսի երկու անխոնջ աշակերտներին՝ Ս. Պետրոսին եւ Ս. Պօղոսին՝ ի յիշատակ իրեն։ Այդ մասին են վկայում եկեղեցում արուած արձանագրութիւնները[17]։

ԺԸ. դարի վերջում եւ ԺԹ. դարի սկզբում, երբ Սէյդաբադը դադարում է առեւտրական կենտրոն լինելուց, հայերն սկսում են լքել այն՝ բնակութիւն հաստատելով Հնդկաստանի այլ վայրերում։ Ըստ Մեսրոպ Սէթի՝ 1860ից յետոյ 75 տարիներ շարունակ Սէյդաբադի հայկական եկեղեցում կրօնական արարողութիւն չի կատարուել։ Վերոգրեալ թուականից մինչեւ Առաջին Համաշխարհային Պատերազմն էլ եկեղեցին մեծապէս տուժել է երկրաշարժերի, ջրհեղեղների եւ հրդեհների պատճառով։ Միայն մասնակի վերանորոգութիւններ են կատարուել անցած դարի տարբեր ժամանակներում։

Եկեղեցու համար բախտորոշ էին յատկապէս Ի. դարի 50ականները։ Մասնաւորապէս Կալկաթայի հոգեւոր հովիւ Տ. Արամայիս Քհնյ. Միրզայեանը 1954ին երկու անգամ այցելում է Սէյդաբադ, մօտիկից ծանօթանում եկեղեցու վիճակին եւ իր մտահոգութիւնների մասին տեղեկացնում Կալկաթայի եկեղեցական վարչութեան անդամներին։ Նոյն եկեղեցականի նախաձեռնութեամբ մեծ ուխտագնացութիւն է կատարուում Սէյդաբադի հայոց եկեղեցին 1962ին։ Կալկաթահայ համայնքի 53 անդամներ մասնակցում են Սուրբ Պատարագին եւ հաղորդութիւն ստանում։ Նոյն տարում Սէյդաբադ է այցելում նաեւ Հայրապետական Պատուիրակ Տ. Ասողիկ Եպս. Ղազարեանը։ Այս այցելութիւնների արդիւնքում եկեղեցին վերանորոգւում եւ բարեկարգւում է։ 1963 Յունուարի 26ին՝ Հնդկաստանի Հանրապետութեան Օրը, Տ. Պօղոս Քհնյ. Պետրոսեանի ձեռամբ կատարւում է եկեղեցու վերաբացման արարողութիւնը։ Դրանից յետոյ աւանդութիւն է դառնում հնդկահայ համայնքում ամէն տարի Յունուար ամսին ուխտի գնալ Սէյդաբադ։

Ի. դարի 60-70ականներին, ժամանակի հոգեւոր առաջնորդների նախաձեռնութեամբ ամէն տարի Մարդասիրական Ճեմարանի մի խումբ սաներ ուխտի են մեկնել երբեմնի հայաշատ այս բնակավայրը, ուր մատուցուել է Սուրբ Պատարագ եւ կրկին աղօթք հնչել։ Եկեղեցու վերջին խնամակալներն են եղել Մատթէոս եւ Մերի Կարապետեանները, ովքեր նախանձախնդրութեամբ եւ ամենայն փութաջանութեամբ շուրջ կէս դար՝ մինչեւ 1968, խնամել են եկեղեցին եւ նրան յարող տարածքը՝ հայաշունչ ոգով լցնելով Տիրամօրը նուիրուած աղօթատունը։

Սէյդաբադում մինչեւ այսօր էլ տարեցները մեծ ոգեւորութեամբ եւ երախտագիտութեամբ են յիշում Մատթէոս Կարապետեանին՝ նրա մասին զարմանահրաշ դէպքեր պատմելով, թէ՝ Աստուած երազում յայտնւում է Մատթէոսին եւ պատուիրում, որ թողնի իր ընտանիքը, զաւակներին եւ մեկնի Հնդկաստան՝ դառնալով հայազուրկ Սէյդաբադի Սուրբ Աստուածածին եկեղեցու խնամակալը։ Զիմանալով անգամ նման եկեղեցու գոյութեան մասին, բայց անսալով Տիրոջ հրամանին՝ նա թողնում է ամէն ինչ, Պարսկաստանից Հնդկաստան գալիս եւ ստանձնում եկեղեցու խնամակալութիւնը։ Այստեղ նա ամուսնանում է ազգութեամբ հնդիկ Մերիի հետ եւ 20 զաւակ ունենում։ Նա օժտուած է եղել անասելի եւ տիտանական ուժով։ Ըստ տեղացիների՝ երկար

ժամանակ գիւղին մեծ դժուարութիւններ պատճառող մի վագրի հետ մարտի բռնուելով, երկու կէս է անում նրան քաջ Մատթէոսը[18]։

Սէյդաբադի Ս. Աստուածածին եկեղեցին վերազարթօնք ապրեց ԻԱ. դարասկզբին։ 2005-2006ին Կալկաթայի եկեղեցական նորընտիր վարչութիւնը ձեռնամուխ եղաւ Սէյդաբադի հայկական եկեղեցու վերանորոգման աշխատանքներին։ Եկեղեցին այժմ ունի զուտ հայկական նոր զանգակատուն եւ նոր հիւրատուն։ Հայ համայնքին են վերադարձուել նաեւ տեղացիների կողմից նախկինում ապօրինաբար գաւթուած յարակից տարածքները։

2006 Դեկտեմբերի 5ին Հնդկահայոց հոգեւոր հովիւ Տ. Օշական Վրդ. Գիւլգիւլեանի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տիգրան Սրկ. Բաղումեանի մասնակցութեամբ կատարուել է վերանորոգուած եկեղեցու դռնբացէքի արարողութիւնը, իսկ 2007 Մարտի 4ին, Հնդկաստանի եւ Մայրագոյն Արեւելքի Հայրապետական Պատուիրակ Տ. Աղան Աբք. Պալիոզեանի ձեռամբ օծուել են Ս. Աստուածածին վերանորոգուած եկեղեցու Սուրբ Սեղանը եւ սիւների 16 խաչերը[19]։

***

Հնդկաստանի հայ առաքելական միւս եկեղեցիների նման Սէյդաբադի Ս. Աստուածածին եկեղեցու բակում են հանգչում բազում հայորդիներ, ովքեր իրենց վերջնական հանգիստն են գտել երբեմնի հայաշունչ այս քաղաքում։ Այժմ պահպանուել է շուրջ 80 գերեզման։ Դրանց մի մասի արձանագրութիւններն ընթեռնելի են. կան նաեւ մի քանի գերեզմանաքարեր, որոնց վրայից ընդհանրապէս ջնջուել են արձանագրութիւնները։ Ցայսօր պահպանուած ամենահին գերեզմանը Մկրտիչ անունով ումն հայի է, ով մահացել է 1760ին։ Վերջինիս տապանաքարը բոլոր կողմերից ջարդուած է, իսկ վրայի արձանագրութիւնը՝ դժուարընթեռնելի։ Ժամանակագրական առումով նրան յաջորդում են եւս երկու գերեզմաններ։ Առաջինը «Մօվսեսի կողակից ազնիւ տիկին Մարիամ խանումին»ն է, ով մահացել է 1765ին եւ թաղուել եկեղեցու բակում։ Նոյն տարում է իր մահկանացուն կնքել նաեւ Նիկողայոս քահանայի որդի Պետրոսը։

Այսօր դժուար է ասել, թէ ժամանակին քանի գերեզման է եղել Սէյդաբադի եկեղեցու մերձակայքում, քանզի այս առումով տեղեկութիւնները հակասական են։ Թորգոմ Գուլակեան Պատրիարքը, 1917 Մարտի 2ին այցելելով Սէյդաբադ, խօսում է շուրջ 110 գերեզմանի մասին[20]։ Ցաւօք, նա չի անդրադառնում գերեզմանների վիճակին։

1954 Նոյեմբերի 20ին Տ. Արամայիս Քհնյ. Միրզայեանի առաջնորդութեամբ մի խումբ հայեր այցելում են Սէյդաբադ։ Կալկաթայի եկեղեցական վարչութեանը հասցէագրած իրենց նամակում նրանք նշում են եկեղեցու եւ տարածքի անմխիթար վիճակի մասին։ Անդրադառնալով գերեզմաններին՝ նամակագիրները տխրութեամբ արձանագրում են, որ գերեզմանների մեծ մասի վրայից անհետացել են գերեզմանաքարերը, շատերի վրայից հնարաւոր չէ ընթերցել արձանագրութիւնները[21]։

2006 Դեկտեմբերի 5ին՝ Սէյդաբադի վերանորոգուած եկեղեցու բացման արարողութեան ժամանակ առիթն ունեցանք ծանօթանալու եկեղեցու վերջին խնամակալներ՝ Կարապետեան ամուլի թոռնուհի Հելենա Քրէյի հետ, որի ման-

կութիւնը եւ պատանեկութիւնն անցել են եկեղեցու շրջակայքում։ Ըստ վերջինիս՝ եկեղեցու ողջ շրջակայքը 70ականներին պատուած է եղել գերեզմանաքարերով եւ հնարաւոր չի եղել անգամ ազատ քայլել։ Դժբախտաբար, հայերի բացակայութեան, անուշադրութեան եւ բնական աղէտների պատճառով այսօր գերեզմանների մեծ մասն անհետացել է։

Սէյդաբադի եկեղեցու շրջակայքում են թաղուած ժամանակի համայնքային ները, հոգեւոր սպասաւորներ, վաճառականներ եւ ուրիշներ։ Թաղուածների մեծամասնութիւնը տղամարդիկ են։ Տապանաքարերի արձանագրութիւնները վկայում են, որ երբեմն այնտեղ թաղուած են այս կամ այն ընտանիքի բոլոր անդամները։ Վերջին փաստը ցոյց է տալիս, որ ԺԸ. դարավերջ-ԺԹ. դարասկզբին Սէյդաբադում հայերն ունեցել են կազմակերպուած համայնքային կեանք՝ համախմբուած լինելով հայոց եկեղեցու շուրջ։ Ապագային թողնելով պահպանուած գերեզմանների տապանաքարերի ամբողջական վերծանումը՝ ստորեւ ներկայացնում ենք դրանցից ամենակարեւորները։

Սէյդաբադի Ս. Աստուածածին եկեղեցու գաւթում է թաղուած Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանի հիմնադիրներից, ժամանակի նշանաւոր հայ վաճառական Մնացական Վարդանեանը (1772-1827)։ Նա ծնուել է Նոր Ջուղայում 1772 Սեպտեմբերի 6ին։ Երիտասարդ հասակում գաղթել է Հնդկաստան եւ հաստատուել Սէյդաբադ քաղաքում՝ զբաղուելով առեւտրական գործունէութեամբ։ Անուրանալի է յատկապէս նրա բարոյական աջակցութիւնը Հայոց Մարդասիրական Ճեմարանի հիմնադրման գործում։ Փաստօրէն, նա իրականութիւն դարձրեց Ճեմարանի մէկ այլ հիմնադրի՝ Աստուածատուր Մուրադխանեանի տեսիլքը՝ ունենալ կրթական հաստատութիւն, ուր հայ երեխաները կը ստանան ազգային կրթութիւն։ Յետագայում նրա մասունքները տեղափոխուել են Կալկաթա եւ ամփոփուել Ս. Նազարէթ եկեղեցու գլխաւոր խորանի ետնամասում։ Սակայն մեր հետազօտութեան արդիւնքում պարզեցինք, որ եկեղեցական վարչութեան անդամները միայն նրա տապանաքարն են տեղափոխել, իսկ աճիւնը դեռեւս հանգչում է Սէյդաբադի հայկական եկեղեցու բակում։ Մեր տեսած՝ Հնդկաստանի հայկական գերեզմանների մէջ Մնացական Վարդանեանի տապանաքարն ամենագեղեցիկն է, արուեստի իսկական մի գլուխգործոց։ Գերեզմանաքարն այսօր տարբեր մասերից ջարդուած է՝ ծածկուած սպիտակ մարմարեայ տապանաքարով։ Շրջանակի մէջ կանգնած վիճակում քանդակուած է ժամանակի տարազով նրա պատկերը՝ ձեռքին մէկ գիրք, որի շորս կողմում շրջանաձեւ գրուած է. «Մնացական Վարդան Սմբատեան, թիւն փոքր 212», այսինքն՝ 1827։ Տապանաքարի վերեւում տարբեր զարդաքանդակներ են, փոդաւոր հրեշտակներ։ Այն ունի 29 տողից բաղկացած չափածոյ մի արձանագրութիւն։ Ամբողջական արձանագրութիւնը ժամանակին տպագրուել է Մարդասիրական Ճեմարանի 150ամեակին նուիրուած գրքում, այն մէջբերել է նաեւ Հայկազուն Սրբազանն իր օրագրութեան մէջ[22]։ Սակայն աչքի անցկացնելով տպագիրը, Սրբազան Հօր դուրս բերածը եւ համեմատելով գերեզմանաքարի արձանագրութեան հետ՝ նկատեցինք որոշ սխալ ընթերցումներ եւ վրիպակներ, ուստի ստորեւ տալիս ենք արձանագրութիւնն ամբողջութեամբ։ Յատկանշական է որ տապանաքարի վերջին տողի վրայ քանդակագործը նշել է իր անունը։

ԸՍՏ ԱՀԵՂ ՎՃՌՈՅ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ
ԲՆՈՒԹԻՆՍ ՀԱՄԱՅՆ ՆՈՅՆ ԲԱՆԻՒ ՓԱՅԼԻ
ՍՕՂՕՄՕՆԵԱՆՆ ԱՐԴԷՆ ԿԱՏԱՐԻ
ԹԷ ՀԱՆԳՈՅՆ ԵՄ ԵՒ ԵՍ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ
ՅԱՂԱԿԱՐԾՍ ՀԱՍԵԱԼ ԱՌ ՍԱ ՀՐԱՄԱՆ
ԱՅՆ ՎՃԻՌ ՄԱՀՈՒ ՈՐ ՏՈՒԱՒ ՄԱՐԴԿԱՆ
ՈՐՊԷՍ ՄԻ ՀՈՂՈՅ Ի ՆՄԱՆԷ ՍՏԵՂԾԱՆ
ՆՈՅՆՊԷՍ ԵՒ Ի ՆՈՅՆ ՀՈՂ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ
ԱՅՆ ԻՆՉ ՁԲԱՂԻՒՐ Ի ԳՈՐԾՍ ԱՇԽԱՐՀԻ
ԱՅՐ ՎԵՀԱՆՉՆ ՔԱՋ ԵՒ ՄԵԾԱՀՈԳԻ
ԱՆԴԷՆ ԱՌ ՆՄԻՆ ԸՆԴ ԱԽՏ ՏՈԳՈՐԻ
ՅԱՄԻՆ ԻՒՐ ՅԻՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ
ՁԻՄ ԱՀԱ ՀՐԱՒԷՐ ԱԽՏ ՎԱՂԺԱՄԱՆԵԱԼ
ԱՆԴԷՆ ԱՌՆ ՄԻՆ ԻՄՍ ՀԻՃԱՐԿԵԱԼ
ԹԷԵՒ ՍՊԵՂԱՆԻՔ ԲԱՁՈՒՄ ՅԱՃԱԽԵԱԼ
ԲԱՅՑ Ի ՉՈՐՍ ԱՒՈՒՐՍ ՁՍԱ ՓՈՂՈՏԵԱԼ
ԻԲՐ ՁԻ ԱՐԱԳ ԱՌ ՅԵՐԿԻՐ ԼՈՍԵԱԼ
Ի ԽՈՐ ԴԱՄԲԱՐԱՆ ԱՍՏԷՆ ԳԼՈՐԵԱԼ
ԹԷՊԷՏ ԱՌ ՎԱՅՐԻ ԽԱՄՐՈՒԹԻՒՆ ԼՈՒԾԵԱԼ
ԱՅԼ ԱՆԵՂԾԱԿԱՆ ԿՐԿԻՆ ԶԳԵՑԵԱԼ
ՅԱՆՈՒՆ ՄՆԱՑԱԿԱՆՆ ԱՅՐՍ ԱՅՍ ՊԱՏՈՒԻ
ՎԱՐԴԱՆ ՍՄԲԱՏԵԱՆՑ ՅԱՐՄԱՏՈՅ ԲՂԽԻ
Ի ՏԻՍ ՀԱՍԱԿԻ ԹՈՂԵԱԼ ԶԻՒՐ ՀԱՅՐԵՆԻ
ՈՐ Է ՆՈՐՆ ՁՈՒՂԱՅ ԳԱՅ ՁՀԵՏ ԻՒՐ ԲԱԽՏԻ
ԵՒ ԱՐԴ ՁԵՕԹՆ ՁԱՒԱԿՍ ԹՈՂԵԱԼ ՅԱՇԽԱՐՀԻ
Ի ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԷՍ ՀՐԱԺԱՐԻ
Ի ՍԷԻՅՏԱՊԱՏ ՅԱՄԻ ՓՐԿՉԻ 1827-ԻՆ
ՀԱՁԱՐԻԱՅԻ ԱՄՍՈՅ ԹԻՐԱՅ 15-ԻՆ
ՏԱՊԱՆԱՔԱՐՍ ՔԱՆԴԱԿԵԱԼ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ։

Սէյդաբադում Մնացական Վարդանեանի կողքին է ամփոփուած նրա կողակից Եղիսաբէթի մարմինը։ Տապանաքարի վերեւում քանդակուած է երկար մազերով մի կին, որի գլխավերեւում երկու կողմերից հատուում են խնձորենու եւ տանձենու ճիւղերը։

ԵՂԻՍԱԲԵԹ
ԺՐԱԳԼՈՒԽ ԿՈՂԱԿԻՑ ԵՒ ԱՐԺԱՆԻ ԱՄՈՒ
ՍԻՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՎԱՐԴԱՆԻ 333 ԱՄԻ ԴԵ
ՌԱՓԹԻԹ ՀԱՍԱԿԻ ԻՒՐՈՅ՝ ԹՈՂԵԱԼ
ՁՎԾՏԱԿԻՐ ԱՅՐ ԻՒՐ ՅՈՂԲՍ ԵՒ
ՁԵՕԹՆԵՔԻՆ ՊՏՈՒՂՍ ԱՐԳԱՆ
ԴԻ ԻՒՐՈՅ, ԱՅՍԻՆՔՆ Զ7 ՁԱՒԱԿՈՒՆՍ
ԻՒՐ ՅՈՐԲՍ։ ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԷՐ ԵՒ
ՄԱՐՄԻՆ ՍՈՐԱՅ ԱՄՓՈՓԵՑԱՒ
ՅԱՅՍՄ ՏԱՊԱՆԻ Ի11 ԱՐԵԳ ԱՄ
ՍՈՅ ԿԱՄ 4 ԱՒԵԼԵԱՑ ԱՄՍՈՅ

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1816 Ի ՍԷԻԴԱՊԱՏ (*Մարտի 19ին - Տ.Բ.*)։

Ս. Աստուածածին եկեղեցու բակում են թաղուած նաեւ երեք հոգեւորականներ, ովքեր կա՛մ վիճակաւոր հոգեւորականներ են եղել, կա՛մ էլ Հայրապետական Նուիրակ։ Եկեղեցու հարաւային դռան մօտ է Մինաս վարդապետի գերեզմանը, որի մէջտեղում քանդակուած է վարդապետական գաւազան։ Գերեզմանաքարն ունի հետեւեալ արձանագրութիւնը.

Ի ՇԻՐԻՄԻՍ ԱՍՏ ԱՄՓՈՓԻ
ՄԱՐՄԻՆ ՈՒՄԵՄՆ ՍՐԲԱՅՍԻՐԻ։
ՍԱՅ ՄԻԱԲԱՆ ԱՄԵՆԱՅՓՐԿՉԻ
Ի ԸՍՊԱՀԱՆ ՇՕՇ ՔԱՂԱՔԻ։
ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ ՄԵՇԻ ՎԱՆԻ
ԱՆՈՒՆՆ ՍՈՐԱ ՎԵՐԱՁԱՅՆԻ։
ՐԱԲԲՈՒՆ ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԵՒ ՔԱՐՈԶԻՉ ՀԱՄԱՅՆ ԱԶԳԻ։
ՊԱՆԴԽՏԵՑԵԱԼ ՅԱՅՍՄ ԱՇԽԱՐՀԻ
ՈՐ Ի ՀՆԴԻԿՍ ԱՅՍ ՔԱՂԱՔԻ։
ԲԱԶՄԱԱՇԽԱՏ ՅՈՅԺ ՎՇՏԱԼԻ
ՎԱՂՋԱՆ ԱՌԵԱԼ ԱՂԷՏԱԼԻ։
ԱՄԱՑ ԳՈԼՈՎ ԵՕԹԱՆԱՄՆԻ
Ի ՍԷԻԴԱՊԱՏ ԿԵԱՆՍ ՎՃԱՐԻ
ԹԻՎՆ 1803Ի, ՈՎԴԱՆ ԱՄՍՈՅ 15Ի, (*Յունուարի 29ին - Տ.Բ.*)։

Տապանաքարի արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ Մինաս վարդապետը «վաղջան առեալ աղէտալի»։ Հաւանաբար այս արտայայտութիւնից պէտք է ենթադրել, որ նա մահացել է ինչ-որ հիւանդութիւնից, ամենայն հաւանականութեամբ՝ այն ժամանակ մահացու համարուող մալարիայից։

Վերոգրեալից քիչ ներքեւ Սուրբ Էջմիածնի նուիրակի գերեզմանն է։ Տապանաքարի մէջտեղում երկգլխանի օձագլուխ վարդապետական գաւազանն է, որի երկու կողմերում կարդում ենք հետեւեալ արձանագրութիւնը.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻ
ԱԾՆԻ ՆՈՒԻՐԱԿ ԵՓՐԵՄ ՊԵՏՐՈՍԻ
ՏԷՐ ՍԱՀԱԿ ԱԲԵՂԱՅԻՆ։
ՋՈՐ ԽՂՃԱԼԻ ՄԱՀՈՒԱ
ՄԲ ԱՍՏԷՆ ՓՈԽԵՑԱՒ։
ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ
1789 ՅԱՊՐԻԼԻ 7 Ի ՍԷ
ՅԴԱՊԱՏՈՋՍ։

Սէյդաբադում է ամփոփուած նաեւ ոմն Մելքումի որդի Տէր Բաղդասարի մարմինը, որի տապանաքարն ունի հետեւեալ արձանագրութիւնը.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԷԼՔՈՒՄԻ ՈՐ
ԴԻ ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ՏԷՐ ԲԱ
ՂԴԱՍԱՐԻՆ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ
ՅԱՇԽԱՐԷՍ ԹԻՎՆ ՀԱՅ
ՈՅ 1231, ԱԶԱՐԻ, ՀԱՄ
ԻՐԱ ԻԱ, ՍԷՏԱՊԱՏ (1782 *Դեկտեմբերի 6ին - Տ.Բ.*)։

Էջմիածնի Նուիրակի տապանաքարը



Մինաս Վարդապետի տապանաքարը

Ուրախալի է, որ վերջին տարիներին Կալկաթայի եկեղեցական վարչութեան եւ Մարդասիրական Ճեմարանի պաշտօնէութեան ջանքերով տարբեր առիթներով ուխտագնացութիւններ են կատարւում Սէյդաբադ եւ Ս. Աստուածածին եկեղեցի։

Սէյդաբադի հայոց եկեղեցին եւ հայերին պատկանող ամբողջ տարածքն անլուր վկաներն են երբեմնի բարգաւաճ հայ համայնքի, որտեղ գործել եւ աբարել են հայ նախնիք։ Վերջին տարիների նպատակասլաց աշխատանքը յոյս է ներշնչում, որ հնդկահայ համայնքի այս գոհարը, անկախ հայերի լինել-չլինելուց, դեռ երկար ժամանակ կանգուն կը մնայ, քանզի այն ոչ միայն հայ մշակութային ժառանգութեան մէկ մասնիկն է, այլեւ իր պատմականութեամբ եւ նշանակութեամբ դարձել է նաեւ բազմակրօն եւ հին քաղաքակրթութիւն ունեցող Հնդկաստան երկրի պատմամշակութային հարուստ ժառանգութեան անբաժան մասը։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Պատմական Բենգալիան վերջին երկու հազարամեակների ընթացքում եղել է տարբեր կայսրութիւնների եւ թագաւորութիւնների մաս։ 1947թ. յետոյ կրօնական առումով այն բաժանուեց երկու մասի. մուսուլմանական բնակչութեամբ մասն անցաւ Արեւելեան Պակիստանին, իսկ այնուհետեւ՝ Բանգլադէշին, իսկ միւս մասը մնաց ներսմեան Հնդկաստանի տարածքում։ Արեւմտեան Բենգալիան Հնդկաստանի 28 նահանգներից է, որի պաշտօնական լեզուներն են՝ բենգալերէնը, հինդուն եւ անգլերէնը։ Այս նահանգում են գործում հայկական հինգ եկեղեցիները՝ Կալկաթայի Ս. Նազարէթ (1707), Ս. Գրիգոր Լուսաւորիչ (1906), Տինգրայի Ս. Երրորդութիւն (1867), Ջինսուրայի Ս. Յովհաննէս (1695-1697), Սէյդաբադի Ս. Աստուածածին (1758), եւ 189ամեայ Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանը։

[2] Այս մասին տե՛ս՝ Mesrovb J. Seth, "The Oldest Christian Tomb in Calcutta, Bengal Past & Present", *Journal of the Calcutta Historian Society*, January-June, 1932, էջ 27-9, Mesrovb Jakob Seth, *Armenians in India*, Calcutta, 1983, էջ 419։ Տապանաքարի լուսանկարը եւ այլ մանրամասներ տե՛ս՝ Տիգրան սարկաւագ Բաղումեան, *Արեւմտեան Բենգալիայում թաղուած Հայ Հոգեւորականները*, Երեւան-Կալկաթա, 2007, էջ 13-5, 77։

[3] Կառավարող դերդաստան Հնդկաստանում՝ 1526-1857։ Այն հիմնադրուել է Թիմուրեանների առաջնորդ Բաբուրի կողմից, երբ վերջինս յաղթում է Դելիի վերջին իշխան Իբրահիմ Լոդիին։ Մուղալը (Mughal) մոնղոլ բառի պարսկերէն տարբերակն է։ Այսպէս էին կոչւում Կենտրոնական Ասիայի այն թափառաշրջիկները, ովքեր իրենց Ջինգիզ Խանի յետնորդներ էին համարում։ Մեծ է եղել մուղալ կայսրերի ազդեցութիւնը ժամանակի արուեստի եւ ճարտարապետութեան վրայ. Մուղալ կայսր Շահ Ջահանի օրօք կառուցուել է աշխարհի հրաշալիքներից մէկը՝ Թաջ Մահալը։

[4] Մուղալ կառավարիչների վարած հեռատես քաղաքականութեան հետեւանքով հայերը հաստատուեցին Հնդկաստանի զանազան քաղաքներում։ Նրանք ոչ միայն զբաղւում էին առեւտրական գործունէութեամբ, այլեւ կառուցում շինութիւններ, հիմնում աշխատատեղեր, բարեգործական, կրթական եւ այլ հաստատութիւններ՝ դրանով իսկ նպաստելով նաեւ երկրի տնտեսական զարգացմանն ու ժողովրդի բարօրութեանը։ Հայերի մէջ կային նշանաւոր դիւանագէտներ, իրաւաբաններ, բժիշկներ, մշակոյթի գործիչներ, ովքեր նպաստեցին Հնդկաստանի զանազան բնագաւառների զարգացմանը։ Իսկ Խոջա Փանոս Քալանթարի հետ կնքուած պայմանագրով հայերն անգլիացի վաճառականների նման նոյն իրաւունքներն ստացան։ Նրանք ազատ եղումուտի ի-

բաւունք ունէին անգլիական բոլոր առեւտրական կենտրոններում, կարող էին ապրել ընկերութեանը պատկանող քաղաքներում եւ այլ վայրերում, դառնալ սեփականատէր, իրենց կրօնական զգացմունքները բաւարարելու համար եկեղեցիներ շինել, առեւտրական բեռներն առանց մաքսի տեղափոխել անգլիական նաւերով, եւն. (Seth, էջ 231-244, Վահան Բայբուրդեան, Համաշխարհային Առեւտուրը եւ Իրանահայութիւնը 17րդ Դարում, Թեհրան, 1966, էջ 221-223. նաեւ՝ Ա. Գ. Աբրահամեան, Համառօտ Ուրուագիծ Հայ Գաղթականների Պատմութեան, Հտր. Ա., Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 457-460. նաեւ՝ Լէօ, «Հայկական Տպագրութիւն», Երկերի Ժողովածու, Հինգերորդ Հատոր, «Հայաստան» Հրատ., Երեւան, 1986, 512. նաեւ՝ Արշակ Ալպօյաճեան, Պատմութիւն Հայ Գաղթականութեան, Հայերու Ցրուումը Աշխարհի Չորս Կողմերը. Գ. Նոր Դարու Սկիզբէն Մինչեւ Թ. Դարու Սկիզբը. Ա. Մաս Արեւելեան Գաղութներ, Հտր. Գ., Գահիրէ, 1961, էջ 320-323, 337-361).

5 Երբ 1690ականներին անգլիացիները հաստատուեցին Կալկաթայում, նրանք ցանկանում էին զորձակալատուն եւ մեծ ամրոց շինել՝ ապրանքներն ապահով պահելու համար։ Բայց դրա համար անհրաժեշտ էին հողակտորներ եւ ամենակարեւորը՝ մուղալ կայսր արտօնութիւնը։ Անգլիացիները քաջ գիտակցում էին, որ մուղալի կառավարիչների մօտ իրենց համար կարող են բարեխօսել եւ միջնորդներ լինել միայն հայերը, ովքեր տարիների աշխատասիրութեան եւ հաւատարմութեան շնորհիւ վայելում էին տեղի կառավարիչների համակրանքն ու յարգանքը։ Ուստի ընտրութիւնը կանգնում է Խոջա Իսրայէլ Սարհադի վրայ։ 1698ին վերջինիս եւ արքայազն Ազիմ-ուշ-Խանի միջեւ բանակցութիւններով անգլիացիներին է վերապահւում Կալկաթայի երեք գիւղերի վարձակալման իրաւունքը։ Յետագայում նոյն այս վաճառականն այն իրրեւ պատգամաւոր 1715ին Դելի գնաց եւ անգլիացիների համար կարողացաւ ձեռք բերել «Մեծ Ֆարմանը», որով Հնդկաստանի մէջ փաստօրէն հիմնադրուեց Բրիտանական կառավարութիւնը (Մեսրոպ Յ. Սէթեանց, «Հայերն Իրր Քաղաքական Ոտից Կայան Հնդկաստանի Մէջ. Խոջա Իսրայէլ Սարհադ», Բազմավէպ, Հտր. ՂԵ., 1937, թիւ 1, էջ 68-72. նաեւ՝ Տիգրան տարկաւագ Բաղումեան, «Նշանաւոր Հայ Վաճառականն Ու Դիւանագէտը՝ Խոջա Իսրայէլ Սարհադ», Աշդարար, թիւ 6, 2009, էջ 28-29)։

6 Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանը հիմնադրուել է 1821ի Ապրիլի 2ին ջուղայեցի բարերարներ Աստուածատուր Մուրադխանեանի տեսիլքով եւ Մնացական Վարդանեանի անմիջական նախաձեռնութեամբ։ Նրանց նպատակն էր հայեցի եւ ազգային կրթութեամբ ապահովել հնդկահայ գաղութի զաւակներին։ Ճեմարանն իր պատմութեան ընթացքում գաղութի կեանքի նման ունեցել է վերելքի եւ անկման շրջաններ։ Տարբեր շրջաններում այստեղ են դասաւանդել նշանաւոր հայորդիներ Յովհաննէս Աղանուրեանցը, Յարութիւն Գալուստեանը, Մեսրոպ Սրկ. Թաղիադեանը, Յովհաննէս Աւդալեանը եւ Աստուր Կիւզէլեանը։ Ճեմարանի ականաւոր սաներից են ԺԹ. դարի հայագէտ Մկրտիչ Էմինը, Թադէոս Աւետումեանը, Յարութիւն Տէր-Յովհաննեանցը, Մեսրոպ Սէթը, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Կիւրեղ Բ. Իսրայէլեանը, Տ. Ներսէս Ա. Քէնյ. Ներսիսեանը եւ ուրիշներ։ 1953ին Ճեմարանին է միանում Դաւթեան Օրիորդաց Վարժարանը։ 1990ականներին աշակերտներ չլինելու պատճառով Ճեմարանը կանգնած էր փակման վտանգի առաջ։ Կալկաթահայերի եւ նախկին ճեմարանականների նախաձեռնութեամբ եւ Արեւմտեան Բենգալիայի Բարձրագոյն Դատարանի որոշմամբ 1999ին Ճեմարանը յանձնւում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինութեանը։ Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ վերջին շրջանում բազմաթիւ փոփոխութիւններ են կատարուել այնտեղ. բարձրացել է կրթական մակարդակը, բարելաւուել են սաների կենցաղային պայմանները եւ Ճեմարանը վերագտել է իր երբեմնի ազգային նկարագիրը։ Այսօր այնտեղ ուսանում են շուրջ 80 սաներ՝ Իրանից, Հայաստանից եւ Իրաքից (Ճեմարանի մասին տե՛ս՝ Զ. Գ. Հանանեան,

Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանը 1821-1971, Թեհրան, Տպարան «Ալիք», 1971, էջ 9-96)։

[7] Վերջին 5 տարիներին Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ եւ Կալկաթայի Եկեղեցական Վարչության նախաձեռնությամբ վերանորոգուել են Կալկաթայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ հայկական ծերանոցը, հիմնովին վերանորոգուել են Տինգրայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, բարեկարգուել է եկեղեցու տարածքը, կառուցուել է «Գարեգին Բ. Վեհափառի անուան բժշկական կենտրոն։ Այս ընթացքում վերանորոգուել են Սէյդաբադի եւ Մադրասի Ս. Աստուածածին հայկական եկեղեցիները, Կալկաթայի հայկական ակումբը եւ Հայոց Մարդասիրական Ճեմարանի վարչական շէնքերը։ Յատուկ ուշադրութիւն է դարձուել նաեւ փոքրաթիւ հայերի ընկերային-տնտեսական պայմանների բարելաւմանը։

[8] Մուրշիդաբադը Բենգալիայի ամենահին քաղաքներից է՝ անկախ կառավարիչների վերջին մայրաքաղաքը եւ բրիտանացիների տիրապետության ժամանակ՝ առաջինը։ 1704ին Մուրշիդ Կուլիա խանի կառավարությունը Դաքքայից տեղափոխուում է Մաքսուդաբադ՝ վերջինիս տալով իր անունը։ Մուրշիդաբադ քաղաքը Գանգէսի վտակ Բհագիրաթի հարաւային դետափի վրայ է։ Ինչպէս ԺԸ.-ԺԹ. դարերում, այնպէս էլ այսօր այն մետաքսի արտահանման մեծ կենտրոն է, ունի նաեւ զարգացած գիւղատնտեսութիւն։ Այսօր մեծաւ մասամբ քաղաքի բնակիչները մուսուլմաններ են եւ հինդուներ։

[9] Աուրանգզէբը կամ Ալամգիր Ա.-ն (ամբողջական անունը՝ Աբու Մուզաֆֆար Մուհիուդդին Մուհամմադ Աուրանգզէբ Ալամգիր) Մուղալ կայսրության վեցերորդ կառավարիչն է՝ Շահ Ջահան կայսեր երրորդ որդին, ով 48 տարիներ կառավարեց Հինդուստանը։ Նա շատ կրօնամոլ էր՝ հաւատարիմ իսլամական օրէնքներին։ Նրա կառավարության օրօք բազմաթիւ հնդկական տաճարներ քանդուեցին եւ եղծուեցին, ոչ-մուսուլմաններին պարտադրուեց իսլամական կրօնը։ Ազդուելով մուսուլմանական օրէնքներից՝ Աուրանգզէբն արգելեց արքունիքում երաժշտութիւնը, աքսորեց բազմաթիւ երաժիշտների, պարողների եւ երգիչների, երկրում դադարեցրեց ծաղկում ապրող մանրանկարչութիւնը, որոնք էլ բազմաթիւ խռովութիւնների պատճառ դարձան։ Նա իր երեխաներից շատերին եւ նրանց կանանց աքսորեց եւ բանտարկեց՝ իր կեանքի մայրամուտին մնալով միայնակ։ Մահացել է 1707ին Ահմէդնագարում՝ 90 տարեկան հասակում։

[10] Աբրահամեան, էջ 448-449. նաեւ՝ Anne Basil, *Armenian Settlements in India*, Calcutta, 1969, էջ 34. նաեւ՝ Seth, էջ 325։

[11] Վկայութիւնը մէջբերել է Սէթին իր աշխատութեան մէջ, տե՛ս՝ Seth, էջ 325։

[12] Այս մասին տե՛ս՝ Թովմաս Խօջամալեան, Նոր Ջուղայեցւոյ Պատմութիւն Հնդկաց, Մասն Երկրորդ, Կալկաթա, Տպ. Ազգասէր Արարատեան, 1849, էջ 141-148. նաեւ՝ Ալպօյաճեան, էջ 299-300։

[13] Աքբարի վարած այս իմաստուն քաղաքականութեան շնորհիւ հայերը մնայուն կայք հաստատեցին Ագրայի շրջակայքում եւ 1562ին կառուցեցին հայկական եկեղեցի, որ կանգուն էր մինչեւ ԺԹ. դարը։ Հայերի ներկայութեան մասին է վկայում նաեւ Ագրայի հայկական գերեզմանատունը։ Այս մասին տե՛ս՝ Աբրահամեան, էջ 447-8. նաեւ՝ Ալպօյաճեան, էջ 299-301. նաեւ՝ Բայբուրդեան, էջ 195. նաեւ՝ Seth, էջ 2-3, 120-34։

[14] Նշանաւոր այս հայ վաճառականին Յովսէփ Էմինը 1792ին Լոնդոնում տպագրուած Յովսէփ Էմին Հայի Կեանքն Ու Արկածները ինքնակենսագրական աշխատութեան մէջ անուանում է «կալկաթահայերի երկրային աստուած», որն էլ խօսուն վկայութիւնն է այն խորը յարգանքի, որ Խոջա Պետրոսն ունեցել է հնդկահայ գաղութում (Amy Apcar (ed.), *Life and Adventures of Emin Joseph Emin 1726-1809 Written by Himself*, 2nd

edition, Calcutta, 1918, էջ 435. նաեւ՝ Խօջամալեան, էջ 50-75. նաեւ՝ Seth, էջ 343-56)։ Խոջա Պետրոսի տապանաքարի արձանագրութիւնը տե՛ս՝ Բաղումեան, էջ 8-9։

[15] Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրատուն, ձեռ. N 631, թ. 207ա։ Սրբազանի մէջբերած եկեղեցու արձանագրութեան որոշ հատուածներ ուղղել ենք՝ այն համեմատելով 1963ին Կալկաթայում լոյս տեսած գրքոյկի մէջ զետեղուած արձանագրութեան լուսանկարի հետ (*A Short History of the Armenian Apostolic Church of Holy Virgin Mary* (Saidabad, West Bengal), Calcutta, 1963, էջ 20)։

[16] Գրիգոր Յարութիւնեանը, հնդկական աղբիւրներում յայտնի է Գորդին Խան անունով։ Նա բենգալական բանակի հրամանատար է նշանակուել Բենգալիայի իշխան Միր Կասիմի կողմից՝ յամառ պայքար մղելով անգլիացի գաղութարարների դէմ։ Նրա առաջնորդութեամբ հնդկական բանակը բազում յաղթանակներ է տարել անգլիացիների դէմ։ Վերջիններս անգամ փորձել են կաշառել նրան, բայց հայ զօրավարն անպատուաբեր է համարել ուխտադրուժ լինելը եւ մերժել նման առաջարկները։ Նա գործօն մասնակցութիւն է ունեցել 1762-63ի հնդիկ-անգլիական կռիւներին։ Մահացել է 1763 Օգոստոսի 11ին դառնալով դաւադրութեան զոհ (Խօջամալեան, էջ 82-123. նաեւ՝ Աբրահամեան, էջ 464-9. նաեւ՝ Լէօ, էջ 518-9. նաեւ՝ Ալպոյաճեան, էջ 340-1, 344-5. նաեւ՝ Seth, էջ 384-418)։

[17] Բաղումեան, էջ 9։

[18] Մատթէոս Կարապետեանի մասին այս զրոյցները մեզ պատմել են ամերիկաբնակ նրա դուստրը՝ Լուսի Այվազեանը եւ այժմ Սէյդաբադում ապրող տարեցները։ Մենք մի քանի անգամ այցելել ենք երբեմնի հայաշատ այս քաղաքը եւ ամէն անգամ հպարտութիւն ապրել՝ տեղի բնակիչներից զանազան հետաքրքրական պատմութիւններ լսելով Սէյդաբադի Ս. Աստուածածին եկեղեցու վերջին խնամակալների մասին։

[19] Բաղումեան, էջ 10-11. նաեւ՝ Էջմիածին, ԺԲ., 2006, էջ 124։

[20] Ամբողջ Երկեր Տ. Թորգոմ Պատրիարք Գուչակեանի, Հ., Հնդկահայք, Տպաւորութիւններ եւ Տեղեկութիւններ (Պատկերազարդ), Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1941, Դուրեան Մատենադարան, թիւ 21, էջ 170։

[21] A. Caro Martin, *The Armenian Community in India, Its Churches and Affairs*, Calcutta, 1958, էջ 41։

[22] *Armenian College Old Boy's Union Souvenir*, Golden Jubilee, 1909-1959, Calcutta, 1965, էջ 5. նաեւ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. N 631, էջ 206-207։

THE ARMENIAN CHURCH OF SEYDABAD AND SOME OF ITS FAMOUS TOMBSTONES
(Summary)

TIGRAN BAGHUMIAN
tigransrk@yahoo.com

The State of Bengal has had a unique meaning in the life of Armenians in India, who started to live there in the early 17th century before the British. By the mid-18th century, Armenians had become a very active merchant community in Bengal. At first they settled at Saidabad, a suburb of Murshidabad, and in 1665, by virtue of a royal Farman issued by Mughal emperor Aurangzeb (1658-1707), they were granted a plot of land and were permitted to form a settlement.

In 1758 the Armenians built a church dedicated to St. Mary with money donated by Khoja Petros Arrathoon, a famous Armenian merchant and benefactor of the time.

The author reflects on the history of the Armenian Church and community of Saidabad, on the Armenian cemetery and quotes the lost inscription of the founding of the Church.

The author notes that Armenian tradesmen, clergymen and representatives of the community are buried in the Saidabad Church cemetery. The inscriptions of the gravestones of Mnatsakan Vardan, one of the founders of the *Hayots Martasiragan Djemaran*, of his wife Elizabeth and of three clergymen buried there are particularly mentioned.

The article gives an account of the last caretakers of this Armenian Church, Matheos and Mary Carapiet, and their generous activities to preserve the church and the Armenian spirit as well as the legendary stories told about Matheos by the locals.